«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ, ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

ԱՌԱՐԿԱ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶ Ք. ԵՐԵՎԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ I Աշխարհագրություն առարկայի ուսումնառության

հիմնախնդիրները 5

1.1 Հիմնախնդիրներ << Աշխարհագրություն >> առարկայի սկսնակ

սովորողների համար 5

1.2 Հիմնախնդիրներ աշխարհագրության ուսուցիչների համար 6

Գլուխ II ՈՒսուցչի գործողությունները սովորողների մոտ << Աշխարհագրություն >> առարկայի հանդեպ մոտիվացիա ստեղծելու առումով 7

2.1 Դասավանդման մեթոդի ընտրությունը 8

2.2 Օրվա դասի հետաքրքրությունների փուլի ճիշտ կազմակերպում 12

2.3 Տնային առաջադրանքների բովանդակությունը 13

2.4 Միջառարկայական կապերի ստեղծումը 15

2.5 Գեղագիտական ճաշակի ձևավորումը աշխարհագրության դասերին 16

2. 6 Դասի անդրադարձման մեթոդներ 19

Գլուխ III Մարդ ծնվում են, անձ դառնում են, անհատականությունը՝ պաշտպանում 21

Եզրակացություն 22

Օգտագործված գրականություն ցանկ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրությունը ինքնին բարդ առարկա է և հաճախ այն մատչելի չէ սովորողներին: Առարկայի բարդությունը բխում է նրանից, որ այն հանդես չի գալիս որպես առանձին առարկա: Եթե հստակ ասենք, աշխարհագրությունը հանդիսանում է տարբեր բնագիտական առարկաների համախումբ, որին 6-րդ դասարանի սովորողները հիմնական դպրոցում առերեսվում են առաջին անգամ: Այսինքն ժամանակակից աշխարհագրությունը բարդ ճյուղավորված համակարգ է կամ գիտությունների «ընտանիք» բնական (ֆիզիկական և աշխարհագրական) և սոցիալական (տնտեսական և աշխարհագրական) , որոնք կապված են ընդհանուր ծագման և ընդհանուր նպատակների հետ: Հարկ է նշել , որ աշխարհագրության դասերը ներառում են նաև հումանիտար տարատեսակ առարկաներ՝ պատմություն, գրականություն, օտար լեզուներ և այլն: Եթե ավելի ամփոփ ասենք աշխարհագրությունը ինտեգրված առարկա է, որը պահանջում է բազմակողմանի գիտելիքների իմացություն:

Առարկայի բարդեցմանը նպաստում է նաև Հանրակրթական պետական ծրագիրը, որը սկսնակ սովորողի առջև աշխարհագրություն առարկայի դռները բացում է շաբաթական 1 անգամյա դասընթացով:

Այս հանգամանքներում առարկան առաջացնում է երկակի <u>հիմնախնդիր</u>՝.

1. Դասի յուրացվածության անմատչելիություն՝ աշակերտի համար,
2. Դասի որակական գնահատականի ապահովման բարդություն՝ ուսուցչի համար:

Հենց այս պարագայում է պետք է անդրադարձ կատարել Ռալֆ Էմերսոնին՝. «Ուսուցիչն այն մարդն է, ով դժվար բաները դարձնում է հեշտ» : Եվ այստեղից էլ բխում է դասի մտնող ուսուցչի հիմնական <u>նպատակը :</u>

1. Ուսուցչի պարտականությունն է սովորողի մոտ մոտիվացիա առաջացնել դասընթացով հետաքրքրվելու, առարկան սիրելու , դժվարը հեշտ դարձնելու,ինքն իր ունակություններն ու կարողությունները բացահայտելու հարցում:

2. Ուսուցիչը պետք է կարողանա սովորողի մեջ սերմանել մի գաղափար . սովորողները անդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով կարող են հասնել ինքնաճանաչման:

3. Սովորողի մոտ ինքնաճանաչման և ինքնագնահատման միջոցով ուսուցիչը ակամայից պետք է դառնա վաղվա առողջ և լիարժեք հասարակության կերտողը, դառնա այն սերմնացանը, որի ուսերին դրվում է այսօրվա մատաղ սերնդի ճիշտ դաստիարակությունը , և վաղվա հասարակության կողմից ընդունվող, գնահատվող հասուն քաղաքացու համար պատասխանատվությունը, և ինչու՞ ոչ, վաղվա լիդեր քաղաքացու կերտումը:

4. Ուսուցիչը պետք է վստահ լինի, որ ինքնաճանաչման և ինքնագնահատման միջոցով այսօրվա սովորողը և՞ մասնագիտական, և՞ քաղաքացիական առումով աներկբա կգտնի իր հստակ տեղը հասարակության մեջ, քանի որ դրանց միջոցով սովորողի մոտ կձևավորվեն վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, նա կկարողանա հաջողությամբ կառավարել սեփական ուժերը, գիտելիքները և հմտությունները, կկարողանա դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում:

5. Իսկ այսօր դրա պատասխանատուն հանդիսանում է միայն այն ուսուցիչը, որը կկարողանա ստույգ կազմակերպել դասավանդման իր գործընթացը, հավաստի ընտրել դասավանդման այն մեթոդները , որոնք նպատակաուղղված կլինեն սովորող-ների համակարգված և ինտեգրված մտածողության զարգացմանը:

Եվ քանի որ աշխարհագրությունը ապահովում է գիտելիքների բազմակողմանի իմացություն և զարգացվածություն, հետևաբար վաղվա լիարժեք հասարակության անդամ , գիտելիքների կայուն իմացությամբ օժտված անհատ, որոշակի առանձնա-հատկություններ իր մեջ ներառող անհատականություն կրթելու գործում զգալի է հատկապես աշխարհագրության ուսուցչի գործառույթը: Գործառույթ, որը շղթայա-բար հանգեցնում է ամենակարևոր նպատակի իրականացմանը՝.

ՄԱՐԴ = ԱՆՀԱՏ + ԱՆՁ + ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,

Մարդ ծնվում են, անձ դառնում են, անհատականությունը՝ պաշտպանում:

«Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝նա ձևավորում է մարդուն»:

Մ.Կալինին

ԳԼՈՒԽ I

«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1.1

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՍԿՍՆԱԿ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչու՞ աշակերտը չի յուրացնում կամ դժվարանում է յուրացնել դասի թե-ման.

Խոչընդոտ I

Ինչպես նշվեց կրթական պետական ծրագրով դասընթացին սկսնակ դասարաններում հատկացվում է շաբաթական 1 դասաժամ: Նույնիսկ ամենահմուտ ուսուցչի կողմից մատուցված ամենահետաքրքիր դասը չի կարողանում ապահովել արդյունավետություն , քանի որ սովորողները այսօր չեն ցուցաբերում համակարգված մոտեցում, և սովորույթի առաջ մղմամբ՝ դասը սովորում են դասացուցակով նախա-տեսված դասի նախօրյակին: Բնական է , չպետք է մոռանալ , որ ուսուցչի կողմից դասի մեկնաբանումից հետո անցել է 7 օր : Իսկ աշակերտը այդ շաբաթվա ընթացքում տարբեր առարկաներից ձեռք է բերել տարբեր ծավալով տարբեր տեղեկատվություն: Սովորողի մտապահելու կարողությունը թույլ չի տալիս ստացված ամբողջ տեղե-կատվությունը կրել հիշողության մեջ: Հետևաբար այդ տեղեկատվությունից դուրս է մնում այն , որին ամենաքիչն է անդրադարձ կատարվել:

Խոչընդոտ II

Աշակերտը մեխանիկորեն չհիշեց ուսուցչի մեկնաբանությունը: Նա ստիպված դիմում է դասագրքի օժանդակությանը : Այստեղ աշակերտը հանդիպում է երկրորդ խոչընդոտին:

Դասագիրքը բարդ է , անհասկանալի: Դասերի ծավալը բավականին երկար է (երբեմն 5-7 էջ): Այս խնդիրը հանդիպում է հատկապես 6 –րդ և 7-րդ դասարանների աշխարհագրության դասագրքերում (օրինակ՝ 7 -րդ դասարան, Դաս 3.11 <<Բնական զոնաները, դրանց աշխարհագրական տարածումը>> էջ 89-95) : Ծավալի մեծությունը սովորողին բնականաբար վանում է դասը դասագրքով սովորելուց և սովորողը հեշտությամբ հրաժարվում է դրանից :

Խոչընդոտ III

Սովորողը ուսուցչի մեկնաբանությունը չի հիշում, դասի ծավալը վա-նում է դասագրքից: Ինչ է մնում սովորողին:

Սովորողին մնում է դիմել ծնողի օգնությանը:Այսօրվա ծնողական համայնքի զբաղվածության մակարդակը և ինչ-ինչ այլ պատճառներ թույլ չեն տալիս ծնողին կտրվել առօրյա հոգսերից և օգնել երեխային: Սա հակասություն է առաջացնում ծնող - երեխա հարաբերության մեջ:

Արդյունքում սովորողը դասին ներկայանում է անպատրաստ, նախորդ շաբաթվա գիտելիքները չմարսած և առարկայի նկատմամբ անտարբերության զգացումով:



ԳԼՈՒԽ 1.2

ՀԻՄԱՆԱԽՆԴԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուսուցիչը կոչված է պատրաստել մարդուն ինքնուրույն կյանքի, զինել գիտելիքներով, սովորեցնել նրան ճիշտ վարվելակերպ հասարակական և բնական միջավայրում, զարգացնել նրա մոտ ինքնակրթության և ինքնազարգացման ձգտումը: Սակայն 1.1 ենթագլխում թվարկված սովորողների մոտ առաջացող հիմնախնդիր-ները տանում են այս միտմանը ճիշտ հակառակ ուղղությամբ: Հանդիպելով դժվարությունների սովորողները հրաժարվում են վերոհիշյալից և հեռանում իրենց մեջ անհատական արժեքային համակարգ ձևավորելուց :Այստեղ աշխարհագրության ուսուցիչների համար ստեղծվում է հիմնախնդիր աշխարհագրական կրթական բովանդակությունը իրականացնելու համար: Աշխարհագրական կրթության բովան-դակությունը աշխարհագրական գիտելիքների, կարողությունների և հմտությունների, աշխարհայացքի, գաղափարաբարոյական արժեքների, իմացական և ստեղծագործական փորձի ամբողջությունն է: Աճող սերնդի համար արժեք պետք է համարվեն բնությունն ու մշակույթը, իրազեկությունն ու մտավոր ակտիվու-թյունը, մարդու արժանապատվությունն ու առողջությունը:

Սովորողների մոտ առաջացող հիմնախնդիրներից լուրջ խնդիր է առաջանում նաև ուսուցիչների մոտ որակական առաջադիմության գնահատման առումով, որը ,կարծես թե, իջեցնում է <<աշխարհագրություն>> դասավանդող ուսուց-չի վարկանիշը:

ԳԼՈՒԽ II

ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԱԿԵՐՏԻ ՄՈՏ « ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ » ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆԴԵՊ ՄՈՏԻՎԱՑԻԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՌՈՒՄՈՎ

Հմուտ ուսուցիչը բնականաբար նման իրավիճակից դուրս գալու համար իր առջև մի շարք խնդիրներ է դնում և փորձում գտնել ելք նպատա-կին հասնելու համար:

1. Սովորողների մոտ աշխարհագրություն առարկայի նկատմամբ մոտիվացիա ստեղծելու համար կատարել դասավանդման մեթոդների ճիշտ ընտրություն:

2. Դասավանդման ընթացքում ավելի մեծ ուշադրություն դարձնել օրվա պլանով նախատեսված հետաքրքրությունների խթանման փուլին:

3. Տնային առաջադրանքներում ընդգրկել այնպիսի աշխատանք, որը կգրավի սովորողների ուշադրությունը, նրանց մոտ կզարգացնի մտապահելու և վերլուծելու կարողությունը:

4. Հնարավորություն տալ սովորողներին առաջադրանքները կատարելիս ինքնուրույն ճանաչել իրենց իմացածի և չիմացածի սահմանը:

5.Դասերի ընթացքում միջառարկայական կապերի միջոցով ստեղծել իրավիճակներ, որոնք հնարավորություն կտան ճանաչել, ըմբռնել, արտահայտել ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ:

6.Դասի ընթացքում կիրառվող մեթոդների . անհրաժեշտ աշխատանքային ռե-սուրսների, օգտագործվող դիդակտիկ նյութերի, աշխարհագրական պատկերա-ցումների միջոցով սովորողների մեջ ձևավորել գեղագիտականն ճաշակ, ինչպես նաև սովորողների մոտ զարգացնել պատկերազարդումների միջոցով , գրագետ մայրենի լեզվով հաղորդակցմամբ խոսքը նկարին վարժ զուգորդման կարողունակություն:

Գլուխ 2.1 ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ահավասիկ, սովորողների մոտ առաջացած հիմնախնդիրները լուծելու համար կարելի է որպես դասավանդման մեթոդ ընտրել << Շրջված դասարան>> մեթոդը, որը հնարավորություն է տալիս՝ առանց հիշողությունը լարելու, մտապահել ուսուցչի մեկնաբանությունները դասի վերաբերյալ: Այն լիովին փոխարինում է նաև դասագրքին, ծնողի միջամտության կարիք չի զգացվում :

«Շրջված դասարան» -ի մեթոդը դասաժամին աշակերտի ներկայու թյանը նոր իմաստ է հաղորդում: Սա մոդել է նաև ուսուցիչների հիմնախնդիրը լուծելու համար : Մանկավարժական տեսանկյունից ուսուցիչների համար մեծ մարտահը- րավեր է դասընթացների կազմա-կերպումը և տնային առաջադրանքների հանձնարարումը:

«Շրջված դասարան» -ի մեթոդն առաջացնում է ուսուցչի վարքագծի խոր փոփոխություններ: Նա ամբողջովին փոխում է կեցվածքը և դեմառդեմ մոտեցումից անցնում է կողք կողքի մոտեցման :

«Շրջված դասարան» մոդելը մանկավարժական մոտեցում է, որը փոխում է ուսուցման մեթոդների ավանդական կազմակերպումը , բարդ դասերը սովո-րողների համար դարձնում է մատչելի և հասկանալի: Սովորաբար ավանդական մեթոդի կիրառման ժամանակա տեսական մասը սովորողներին փոխանցվում է դասարանում, իսկ գործնական մասը կատարվում է տանը: «Շրջված դասարան» մեթոդի կիրառման ժամանակ կատարվում է ճիշտ հակառակը՝ տեսական մասը սովորողը յուրացնում է տանը, որը նպաստում է սովորողների հետ ավելի ինտերակտիվ ուսուցման համար հնարավորինս շատ ժամանակ շահելուն:

Դասարանի շրջումը իրականացվում է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման հիման վրա: Առավել հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնում են տեսանյութեր, որոնք պատրաստվում են ուսուցիչների կողմից, իսկ աշակերտները առկա դասընթացից առաջ դրանք ուսումնասիրում են ինքնուրույն:

«Շրջված դասարան» մոդելը ունի և առավելություններ , և թերություններ: Առավելություններից են.

1. Ուսուցումն իրականացվում է դասի ընթացքում ուսուցչի անհատական աջակցությամբ: Դա հնարավորություն է տալիս ժամանակ խնայել ակտիվ աշխատանքներ իրականացնելու, աշակերտների ըմբռնումը ստուգելու և դասընթացի հայեցակարգերը խորացնելու համար:

2. «Շրջված դասարան» մոդելի կիրառման դեպքում ուսուցիչը գիտելիքների փոխանցողի դերից անցնում է գիտելիքների միջնորդի դերի, ով փնտրում, ստեղծում և սցենարավորում է թվային ռեսուրսներ, ուղեկցողի և խորհրդատուի դերի, ինչպես նաև փոխազդեցության դերի, ով ստեղծողի և ղեկավարողի ներառում է աշակերտներին իր դասընթացի պատրաստմանը: Սա հնարավորություն է տալիս սովորողի մոտ ձևավորել ինքնուրույն աշխատելու, իրողությունները քննադատաբար և բազմակող-մանի ուսումնասիրելու ունակություն: Նրանք ինքնակազմակերպվում են և նրանց մոտ ձևավորվում է ժամանակի արդյունավետ կազմակերպման հմտություն:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՈԴԵԼ

«ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ» ՄՈԴԵԼ

3. Ինչու՞ փոխել ավանդական մոդելը:

Գոյություն ունի տրամաբանական բացատրություն, որը տալիս է այս հարցի պատասխանը: Դա Բենիամին Բլումի տաքսոնոմիայի հասկացությունն է, որը բացատրում է գիտելիքների ձեռքբերման մակարդակները: Ավանդական մոդելի դեպքում դասարանում իրականացբված ուսուցումը ուսուցչի կողմից փոխանցված գիտելիքների գրանցումն է (ցածր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ), իսկ հմտությունների զարգացումն ու խորացումը (ավելի բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ) սովորաբար կատարվում են տանը: Դասը շրջելու տրամաբանական հիմք կարող է հանդիսանալ ուսուցչին աշակերտների հետ կցելը, երբ նրանք կատարում են բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ և օգնության կարիք ունեն , և թույլ տալ , որ աշակերտները կատարեն ավելի հեշտ առաջադրանքներ հասակակիցների հետ ինքնուրույն կամ հեռակա: Հնարավորության դեպքում դասարանների հետ ստեղծվում են լրացուցիր հարթակներ, ծագած անհասկանալի հարցերի հեռակա քննարկման համար:<< Շրջված դասարան >> մոդելի կիրառման հիմքում ուսուցչի կողմից սովորողներին դասընթացի նյութը փոխանցվում է տանը՝ տեսանյութերի , ձայնագրությունների կամ կարդալու համար նախատեսված տեքստերի միջոցով: Իսկ ուսուցչի և սովորողների փոխազդեցության ժամանակահատվածը կարող է օգտագործվել հմտությունները զարգացնող աշխատանքներ կատարելու նպատակով:

4.Պարզվում է, որ այս մոտեցումը լավ միջոց է աշակերտների և իրենց ուսուցիչների հարաբերությունները ամրապնդելու համար: Հաշվի առնելով այն փաստը, որ դասի տեսական մասն արդեն փոխանցվել է դասը սկսելուց առաջ, ուսուցիչը կարող է ավելի շատ ժամանակ տրամադրել աշակերտների կողքին լինելու համար և նրանց օգնելու կատարել առաջադրանքներ այն պահին, երբ դրա կարիքն առավել շատ են զգում:Իհարկե դասի սկզբին ուսուցիչը կարող է կատարել ձևավորող գնահատում, քարտեզագրման եղանակով պարզել յուրաքանչյուր սովորողի կողմից դասի յուրացվածության աստիճանը, իսկ հետո աշխատել անհասկանալի կամ չյուրացված հատվածները սովորողներին հասանելի դարձնելու վրա:

5.«Շրջված դասարան» մեթոդը նաև լավ միջոց է ուսուցումը դասաժամից առաջ և հետո տարբերակելու և անհատականացնելու համար: Աշակերտն այսպիսով հետևում է դասին՝ իր համար ցանկալի տեմպով: Նա կարող է դիտել տեսանյութը այնքան անգամ, որքան ցանկանում է: Աշակերտները կարող են դանդաղեցնել կամ արագացնել իրենց ուսուցման տեմպը՝ ըստ իրենց սեփական կարիքների: Ուսուցիչն ավելի շատ ժամանակ

կարող է տրամադրել անհատապես կամ աշակերտների փոքր խմբերի հետ

աշխատելու համար՝ նրանց առաջարկելով իրենց կարիքներին համապատասխան առաջադրանքներ:

6.«Շրջված դասարան»-ում աշխատանքը հիմնված է աշակերտի վրա. վերջինս դառնում է իր ուսուցման դերակատարը և մասնակցում է դասընթացի համաստեղծմանը: Այս պրակտիկայի շնորհիվ ավելի շատ ժամանակ է հատկացվում հմտությունները զարգացնելուն և խորացնելուն՝ կատարելով ավելի բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ, որոնք ավանդական դասաժամերի դեպքում կատարվում են դասերից հետո:

Ակնհայտ է, որ «Շրջված դասարան» մեթոդն ունի նաև թերություններ՝. 1.Տեսանյութեր պատրաստելու համար հարկավոր է տրամադրել երկար ժամանակ: Սակայն գոյություն ունեն փոխանակման կայքեր ուսուցիչների և աշակերտների միջև, որոնք մեծապես հեշտացնում են նյութերի ձևավորման աշխատանքները:

2.Ինչ վերաբերում է աշակերտներին, կարող ենք արձանագրել որոշ խնդիրներ՝ կապված համացանցային կապի և սարքավորումների բացակայության հետ: (հղումող ներկայացվում է << Շրջված դասարանի>> մոդելով մատուցվող տեսանյութի օրինակ https://youtu.be/KGdvRgthuKc և https://youtu.be/K1j2ZDTNmoU) :

Գլուխ 2.2

ԴԱՍԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Այս փուլի խնդիրն է դասը դարձնել հետաքրքիր, դասարանի յուրաքանչյուր սովորողի ներգրավել դասի ընթացքի մեջ, սովորողներին թույլ տալ ազատ արտահայտել իր մտքերը, առաջարկությունները, հարցին ստեղծագործաբար մոտենալ, ինքնատիպ մոտեցումներ դրսևորել թեմայի շուրջ ,ինչպես նաև խմբերով աշխատելու դեպքում իր մեջ մշակել լսելու կարողունակություն:

Այս փուլը պահանջում է աշխատել ինտերակտիվ մեթոդով, որի ժամանակ սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ . նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է, որից էլ բխում է նոր դասի նպատակը և խնդիրները:

Պարզապես ուսուցիչը պետք է կարողանա քննարկման համար ճիշտ իրավիճակներ ստեղծել : Օրինակ , եթե 7 -րդ դասարանում դասավանվում է աշ-խարհագարական կո-որդինատներ դասը, ապա հետաքրքրությունների խթանման փուլում կարելի է շատ արագ կազմակերպել << Ծովային պայքար>> (<< морской бой >>) խաղը (https://drive.google.com/file/d/1070flkb01lYTtB7RN1l3HphW5zugch9l/view?usp=drive_link), կամ անդրադարձ կատարել , գրող ժյուլ Վեռնի << Կապիտան Գրանտի որդինե-րը>> վեպին և թույլ տալ սովորողները կանխագուշակեն որոնողական աշխատանք-ների դժվարության պատճառը: Կամ թեկուզ կարելի տալ նման առաջադրանք՝. ֆրան-սիացի գրող Լուի Բուսենարի << Ադամանդ գողացողները >> վեպի հերոսները հվ.լ. 17°, արլ.ե. 25 ° աշխարհագրական կոորդինատներ ունեցող կետում ականատես ե-ղան մի զարմանահրաշ տեսարանի և կոչեցին այն << Աղմկող ծուխ>> : Աշխարհագրա-կան ո՞ր օբյեկտի մասին է խոսքը:(հղում դասի խթանման փուլից https://drive.google.com/file/d/1hFN9R0h9QhMsNwzWfbeEAueYCu28liK/view?usp=drive_link):

Նման մեթոդով սովորողներին կարելի է հաղորդակից դարձնել նաև արտասահմանյան գրականությանը, նրանց մեջ սեր սերմանել ընթերցանության հանդեպ:

Այսինքն սովորողների մոտ հետաքրքրության մոտիվացիա ստեղծելու համար ուսուցիչը դասի այս փուլը մշակում է այնպես, որ այն կազմված լինի ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում սովորողը ակամա սովորում է նյութը:

Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:

Գլուխ 2.3
ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տնային առաջադրանքներով ուսուցիչը նույնպես պետք է ձգտի մոտիվացիա ստեղծել դասի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու, այն սիրով անելու: Միաժամանակ ուսուցչի նպատակը պետք է լինի սովորողի մոտ զարգացնել վերլուծելու ունակությունը և համակարգված ինտեգրված մտածողությունը : Այդ առումով պետք է դուրս գալ ավանդական տնային առաջադրանքների հանձնարարականներից (պատասխանել դասի վերջում ստված հարցերին և կատարել առաջադրանքները) և մտածել տնային առաջադրանքների նոր ձևի մասին: Ընդ որում տնային առաջադրանքների բովանդակությունը պետք է հաճախակի փոխել: Տնային առաջադրանքների մեջ պետք է տեղադրվեն այնպիսի հանձ-նարարություններ, որոնք պահանջում են տրամաբանական մոտեցումներ, որոնք վերլուծելու և մտորելու կարիք են զգում: Օրինակ, կարելի է տնային աշխատանքի մեջ ներառել դասի թեմայի վերաբերյալ խաչբառեր, ռեբուսներ և նման այլ վերլուծական աշխատանքներ, որոնք կարող են նպաստել սովորողների ինքնակրթությանը: (հղում դասի տնային առաջադրանքներ հատվածից https://drive.google.com/drive/folders/1nkYQe7ot1cXDci_9cxlTjpMIrk8tOKS3?usp=drive_link)

Ցանկալի կլինի տնային առաջադրանքներում տեղադրվեն ինքնա-ստուգման թեստային աշխատանքներ, որպեսզի սովորողը կարողանա ճանաչել իր իմացածի և չիմացածի սահմանը, անդրադարձ կատարի վատ յուրացված հատվածներին:

Տնային աշխատանքներում կարելի է ներառել նաև դասի թեմային վերաբերվաղ հետաքրքիր գրականության ընթերցում , որի քննարկումը կարելի կազմակերպել ամփոփիչ դասերին ՝ խմբային աշխատանքի կարգով:

Տնային առաջադրանքներում պիտի ներառել այնպիսի հանձնարա-րություններ, որոնք կփոխարինեն ուսուցչի կողմից կազմակերպվող ձևավորող գնահատմանը: Տնային աշխատանքի վերջում սովորողը ինքնագնահատման միջոցով կարող է նշել դասի հեշտ ու դժվար, հասկանալի և անհասկանալի մասերը: Դրա համար նա կարող է կիրառել տարբեր արտահայտամիջոցներ ՝ ժպիտներ,Գուսսի մեթոդը, մայրցամաքների ամենաբարձր լեռների հաղթարշավի մեթոդը և այլն:

ԴԺՎԱՐ Է ՀԱՍԿԱՆԱԼԻ Է ՀԱՃԵԼԻ Է ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

Սովորողներին ավելի շատ դուր է գալիս վերջին մեթոդը ՝լեռնագագաթների հաղթահարման մեթոդը: Տրվում է 6 բաժնից բաղկացած հարցեր, ամեն բաժնի հարցերին պատասխանելուց հետո, սովորողը իրեն համարում է որևէ մայրցամաքի ամենաբարձր գագաթը հաղթահարած և այդ լեռան վրա բարձրացնում է հաղթական դրոշը: Տարբեր բաժիններ պարունակում են տարբեր բարդության հարցեր: Ամեն բաժնում մեկ լեռնագագաթ բարձրանալուց հետո, սովորողը նվաճում է բոլոր մայրցամաքները և բարձրացնում է հաղթական դրոշը Ձոմոլունգմայի՝ աշխարհի ամենաբարձր լեռան գագաթին :



Գլուխ 2.4

ՄԻՁԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Տարբեր աշակերտներ ունենում են տարբեր նախասիրություններ: Կան սովորողներ , որոնք հակում ունեն բնագիտական առարկաների հանդեպ: Կան նաև սովորողներ, որոնք նախընտրում են հումանիտար առարկաներ:

Հետևաբար աշխարհագրությունը բոլոր սովորողների համար հետաքրքիր դարձնելու, աշխարհագրություն առարկայի նկատմամբ բոլորի մոտ մոտիվացիա ստեղծելու համար , պետք է դասերի ժամանակ ապահովել միջառարկայական կապեր:

Բնագիտական առարկաներ նախընտրող սովորողների համար կարելի է առաջարկել թեմայի շուրջ տարբեր բարդության , ինչպես նաև տրամաբանական հաշվարկների կատարում, իսկ հումանիտար առարկաներ սիրողների համար՝ աշխարհագրությունը կարելի է կապել պատմության, գրականության, մշակույթի, ժողովրդական ավանդույթների ու ծեսերի հետ: Օրինակ՝. << Հայաստանին աշխարհագրություն>> դասընթացի ժամանակ սովորողները կարող են ստեղծագործել լեգենդներ տարբեր լեռների, գետերի անվանական ծագումնաբանության մասին (Արեգունու լեռների բարձր գագաթը Կարկատասարն է: Առաջադրանք .՝ լեգենդով ներկայացնել, թե ինչու է լեռը կոչվում Արեգունի , իսկ գագաթը՝ Կարկտասար) : Հայաստանի մարզերը ուսումնասիրելիս կարելի է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր մարզի մշակույթին, եկեղեցիներին,վանքերին , դրանց հետ կապված ավանդազրույցներին, այդ մարզի ծեսերին: Աշակերտների մոտ ավելի ուժեղ մոտիվացիա ստեղծելու համար,

կարելի է նրանց առաջարկել, ընտրել որևէ մի մարզ, այդ մարզի վերաբերյալ կատարել նախագծային աշխատանք, այնուհետև նախագիծը իրականացնել հենց նրանց ուսումնասիրած մարզում, վերջնարդյունքները ամփոփել էքսկուրսիայի ժամանակ:

Կամ 8-րդ դասարանում Իտալիա թեման ուսումնասիրելիս՝ ցանկալի է անդրադարձ կատարել պատմությանը, գրականությանը և արվեստին: Այդ նպատակով կարելի է շեշտը դնել Ավետիկ Իսահակյանի << Մի մրահոն աղջիկ տեսա... >> և << Ռավենայում >> ստեղծագործությունների վերլուծմանը, այնուհետև ներկայացնել Ավետիք Իսահակյանի և Սողոմոն Թեհլերյանի կապը, ինչպես նաև Իսահակյանի և Դանթե Ալիգրեի նմանությունը:

8-րդ դասարանում տարբեր երկրներ ուսումնասիրելիս չպետք է մոռանալ նաև սպորտասեր սովորողներին, և յուրաքանչյուր երկիր ներկայացնելիս անպատճառ օրվա պլանի մեջ ներառել սպորտին՝ հատկապես ֆուտբոլին վերաբերվող այնպիսի հարցեր, որոնք անպայման մտորելու տեղիք են տալիս և սովորողին ստիպում հանուն սպորտի տվյալ երկիրը ավելի լավ ուսումնասիրել : Օրինակ 8- րդ դասարանում << Բրազիլիա >> թեման ուսումնասիրելիս կամ 7-րդ դասարանում << Աստիճանացանց >> թեման ուսումնասիրելիս կարելի է հարցադրում կատարել թե, որտե՞ղ է գտնվում այն միակ ֆուտբոլային մարզադաշտը, որը միաժամանակ գտնվում է միանգամից 2 կիսագնդերում՝ հյուսիսային և հարավային, որի դաշտի կենտրոնով անցնում է հասարակածը, ո՞րն է այդ մարզադաշտը: (https://drive.google.com/file/d/1jup1yJpW7OypBVAP0X6vpb7GKQRWWK0R/view?usp=drive_link)

Այսպիսով, միջառարկայական ինտեգրումը իրնից ներկայացնում է տարբեր ուսումնական առարկաների և ծրագրերի փոխադարձ համաձայնեցման գործընթաց՝ մասնագիտական և ուսումնական գործունեության միասնական,անդադար և ամբողջական զարգացման նպատակով: Միջառարկայական կապերով դասավանդումը որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրու-թյուն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Միջառարկայական մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով: Դասերի ընթացքում միջառարկայական կապերի միջոցով ստեղծելով իրավիճակներ ուսուցիչը սովորողներին հնարավորություն է տալիս ճանաչել, ընբռնել, արտահայտել ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ:

Գլուխ 2.5

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Սովորողների մոտ աշխարհագարության դասերի հանդեպ հետաքրքրության մոտիվացիա ստեղծելու համար հարկավոր է նյութը մատուցել գեղեցիկ , որակով, գունագեղ, և հետաքրքիր տարբերակներով: Օրինակ, << Շրջված դասարանի >> մոդելով դասը մատուցելիս պետք է ուսուցչի կողմից պատրաստվող նյութը լինի պատրաստված ճաշակով և գեղեցիկ: Անհրաժեշտ է տեսասահիկների համար պետք է ընտրել այնպիսի գունային ֆոն, որը կշոյի սովորողի աչքը, նրան կհետաքրքրի և սովորողը ակամայից կսկսի ուսումնասիրել դասի թեման: Կարելի է նաև տեսասահիկներում ներառել գունագեղ և մանկական նկարներ: Նկարները պետք է լինեն այնպես ընտրված, որ միայն նկարները հիշելիս սովորողը կարողանա նաև մտաբերել դասի նյութը և պարզապես այդ նկարները վերլուծելով կարողանա ներկայացնել դասը: Դասը կարելի է մեկնաբանել նաև մուլտ ֆիլմերից որևէ մի հերոսի անունից, օրինակ՝ Անգետիկի կողմից տրվող հարցերի միջոցով: (https://drive.google.com/file/d/1X2_ukcYnJd54hoOQVKAFXQleRrXjg-fy/view?usp=drive_link): Ինչքան պատկերները լինեն գունեղ և խոսուն, այնքան կհեշտանա դասավանդող ուսուցչի գործառույթը և սովորողի մոտ հետաքրքրության մոտիվացիայի ստեղծումը: Միաժամանակ սովորողների մոտ կձևավորվի գեղագիտական որակ, որը կդառնա անհատական արժեք, ինչը թույլ կտա նրան հասկանալ, շփվել կյանքում գեղեցիկի հետ և ակտիվորեն մասնակցել դրա ստեղծմանը:

Ուսուցչի կողմից գեղագիտական հետաքրքրություն ստեղծելու միջոցով սովորողների մոտ առաջանում են գործողություններ կատարելու ցանկություններ, որոնք բերում են բավարարվածություն (ուսումնառության գործըն-թացի ուրախությունը , հետաքրքրության առարկայի ճանաչման խորացման սատա-ռելու ցանկություն,ճանաչողական գործունեություն, ձախողումներ զգալու և դրանց հաղթահարման կամային ձգտումներ):

Գեղագիտական հետաքրքրությունը հուզական, կամային, մտքային գործ-ընթացների միասնությունն է, որում անպայման առկա է ճանաչողական սկզբունք, քանի որ, առարկայից հետաքրքրվելով, մարդը ձգտում է դա ավելի լավ իմանալ:

Գեղեցկության զգացումը սովորողների մոտ ստեղծում է հատուկ հուզական և հոգեկան վիճակներ, կյանքի նկատմամբ կոնկրետ ուշադրություն է առաջացնում, սրում հետաքրքրասիրությունը, մտածողությունը, հիշողությունը, պարզեցնում հա-մոզմունքների ձևավորման գործընթացը, վարքը և սովորությունները:

Գեղագիտական ճաշակի զարգացման ընթացքում տեղի է ունենում սովորողների զգայական փորձի հսկայական աճ ու կարգավորում, ընկալման ու մտածողության բուն մարդկային ձևերի տիրապետում և երևակայության բուռն զարգացում,կամածին ուշադրության և իմաստալից մտապահման տարրերի ձևավորում :

Իրավացի է Կ.Դ. Ուշինսկին, երբ գրում է. << Ամեն մի գիտության մեջ քիչ թե շատ կա գեղագիտական տարր, որի հաղորդումն աշակերտներին պետք է նկատի ունենա դաստիարակը>>:

Գեղագիտական դաստիարակությունը մեկ օրվա կամ մեկ առարկայի շրջանակներում դասավանդվող արժեքնրից չէ, անշուշտ: Ուստի, անհրաժեշտ է այն կաթիլ-կաթիլ տալ սովորողին: Գեղեցիկ դասը ինքնին կարող է գեղագիտական հաճույք պատճառել և՛ ուսուցչի, և՛ սովորողների մոտ:

Սովորողների մոտ աշխարհագրության դասերի ընթացքում գեղագիտական ճաշակի ձևավորումը գեղեցիկը նկատելու և արժևորելու դաստիարակությունը կարելի է կազմակերպել նաև արտադասարանական դասերի ժամանակ՝ տարվա տարբեր եղանակներին կազմակերպելով մոտակա և հեռավոր ճանաչողական էքսկուրսիաներ Հայաստանի տարբեր մարզերում:

Գլուխ 2.6
ԴԱՍԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ուսուցիչը դասի ցանկացած պահին փորձում է առաջնորդվել նույն նպատակով՝.մոտիվացիա ստեղծել առարկայի հանդեպ, ձևավորել ինքնուրույն մտածող, վերլուծող, ինքնաճանաչող և ինքնագնահատող սովորող: Դա արվում է անգամ դասի անդրադարձման փուլում : Այն կարելի է իրականացնել տարբեր մեթոդներով.

ՄԵԹՈԴ 1 Մտքերի հոսք

Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև աշակերտները աշխատում են զույգերով, սակայն կարող են աշխատել նաև խմբերով:Նրանք իրար հետ քննարկում են հետևյալ հարցերը.



ՄԵԹՈԴ 2 <<Սատանայի վկա>>

Ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Սրանով ուսուցիչը սովորողի մոտ զարգացնում է լսելու կարողունակությունը:

ՄԵԹՈԴ 3 Երկու բան

ՄԵԹՈԴ 4 Կիսատ նախադասություններ

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է սովորողներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ,ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

ես այսօր սովորեցի....

Այսօրվա դասի ամենաօգտակար բանը

Ինձ ամենաշատը դուր եկավ ....

Կուզեի ավելին իմանալ ...

ինձ զարմացրեց ...

ինձ հետաքրքրեց ...

մի բան, որ չհասկացա ...

այս դասից ավելին կսովորեի եթե ...

Մեթոդները իհարկե շատ են , բայց ուսուցիչը

հետաքրքրությունը ապահովե-լու համար կարող է

պարբերաբար դրանք փոփոխել:

Գլուխ 3

ՄԱՐԴ ԾՆՎՈՒՄ ԵՆ , ԱՆՁ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ , ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ:

Այսպիսով աշխարհագրություն առարկայի նպատակաուղղված քայլերի շնորհիվ սովորողի մեջ ձևավորվում է մտածողություն, հիշողություն, երևակայություն և այլն: Այս ամենը սովորողներին տրվում է ոչ թե ի ծնե և փոխանցվում ժառանգաբար, այլ ձևավորվում է կյանքի ընթացքում կրթության և դաստիարակության շնորհիվ: Որպես անհատ ծնված երեխայի մեջ գիտակցություն և միտք ձևավորվելու ընթացքում անհատը վերաճում է անձի , իսկ անձը իր հետ բերում է անձնավորություններ դառնալու բոլոր նախադրյալները: Այսինքն ճիշտ միջավայր ստեղծելիս անհատը ընդունակ է անձ դառնալու, իսկ անձը՝ անձնավորություն: Սակայն ճիշտ չի լինի անձին դիտարկել որպես միայն սոցիալական միջավայրի պասիվ արդյունք և նրա մեջ չտեսնել ակտիվ գործչին: Չէ՞ որ անձի կողմից մարդկային փորձի յուրացման գործընթացն իրագործվում է նրա ներաշխարհի միջոցով:Անձը դրսևորում է վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչ ինքն է կատարում, և ինչ կատարվում է իր հետ և իր շուրջը: Սոցիալական միջավայրում անձը կատարում է բազմաթիվ դերեր , ստանձնում է պարտականություններ ու իրավունքներ , կարգա-վորում և վերահսկում է իր վարքը և պատասխանատվություն է կրում արարքների համար: Անհատից անձնավորության ճիշտ ձևավորման գործում չափազանց մեծ է դպրոցի և հատկապես ուսուցչի դերը: Որպեսզի մեր աշակերտը վաղը հասարա-կության համար դառնա պիտանի անդամ, այսօր ուսուցիչը պետք է ջանք չխնայի, որպեսզի յուրաքանչյուր սովորողից ձևավորվի յուրօրինակ անհատականություն: Այնպես, ինչպես միևնույն ծառի վրա չկա երկու նույնանման տերև,չկա նաև հոգեբանական առանձնահատկությունների միևնույն ամբողջությունն ունեցող երկու մարդ:Մարդու անձնավորությունն անկրկնելի է իր անհատականության մեջ: Իսկ այդ անհատականություն կերտողի պատասխանատվությունը այսօր կրում է դպրոցը և ուսուցիչը: Այսպիսով՝փորձենք բանաձևել՝

ՄԱՐԴ = ԱՆՀԱՏ + ԱՆՁ + ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,

Մարդ ծնվում են, անձ դառնում են, անհատականությունը՝ պաշտպանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Որպես ուսուցչի տարիների ճիշտ աշխատանքի վերջնարդյունք, կկերտվի մարդ, մեր վաղը հասարակության համար պիտանի անդամ, որը կունենա համակարգված, ինտեգրված մտածողություն, վերլուծելու ունակություն, ինքնաճանաչողական և ինքնագնահատման կարողունակություն ունեցող վաղվա քաղաքացի: Իսկ վաղվա մեր քաղաքացուն բնութագրելու համար ուսուցիչը այսօր պետք է առաջնորդվի մաթեմատիկական հասարակ մի բանաձևով. կոտորակը ամբողջական թիվ է ,եթե նրա համարիչն ու հայտարարը իրար հավասար են: Համարիչը դիտենք որպես աշա-կերտի կարծիքն իր մասին,իսկ հայտարարը՝ որպես հասարակության կարծիքն նրա մասին:

Այսպիսով $$\text{ՄԱՐԴ} = \frac{\text{ՍՈՎՈՐՈՂԻ կարծիքն իր մասին}}{\text{ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ կարծիքն նրա մասին}}$$

Եթե <<աշակերտի կարծիքն իր մասին>> մեծ է <<հասարակության կարծիքն նրա մասին>>, ապա ՄԱՐԴ –ը դառնում է 1-ից մեծ ոչ ամբողջական թիվ , (ինչպես ժողովուրդն է ասում՝ ,,տաս երեսանի մարդ,,), որը տանում

է անհատի գերագնա-հատման: Իսկ հակառակ դեպքում՝ եթե <<աշակերտի կարծիքն իր մասին>> փոքր է << հասաակության կարծիքն նրա մասին>>,ապա ստանում ենք 1-ից փոքր թիվ, որը վկայում է անհատի ինքնաթերագնահատման մասին:Եվ իրեն թերագնահատող , և գերագնահատող վաղվա քաղաքացին չի կարող ներառվել հասարակության մեջ , չի գտնի իր ճշմարիտ տեղը կյանքում: Ուստի այսօր ուսուցչի ամենահրատապ հիմնախնդիրն է դառնում այնպես աշխատել սովորողի հետ, որ նրա մոտ << իր կարծիքը իր մասին>> հավասար լինի <<հասաակության կարծիքն նրա մասին>>:Եթե արդյունքում չապահովենք մեր կոտորակային լիարժեք 1 ամբողջը , ուրեմն մեղքը մերն է: Պետք է հիշել, որ երեխան թուղթ է.ինչ որ գրես այն կկարդաս: Ուրեմն դասավանդման ընթացքում հասնենք նրան , որ աշակերտի մոտ զարգանա ոչ ՝գե-րագնահատման, ոչ ՝էլ թերագնահատման բարդույթ: Հիշենք,որ այսօրվա աշակերտը վաղվա ապագան է, և որքան ծառն պտղակալի, այնքան շիվերն ցած կպահի: Այսինքն աշակերտի անհատից անձի վերափոխվելու այդ բարդ գործընթացը ընկած է ուսուցչի ուսերին: Դա մեր սուրբ խաչն է, որը մենք պետք է կրենք այն հպարտությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. . Ներսիսյան Լ. Ս., Կրթություն և գեղագիտություն, Զանգակ–97 հրատ., Երևան, 2002:

2. Սոցիալական ոլորտի բառարան, Աշոտ Եսայանը, Ե., «Հույսի կամուրջ» ՀԿ, 2005, էջ

Համացանցային կայքեր

1. Հայտարարություններ աշխարհագրության մասին. Մեթոդական նյութ «աշխարհագրական աֆորիզմներ» https://kz09.ru>samopoznanie

2.Ուսուցման մեթոդներ և հնարներ https://lib.armedu.am> files > resource >files 29 սեպտեմբեր 2022 թ

3. Мультиурок https://multiurok.ru › files › prezentatsiia-k-master-kla...

21 янв. 2021 г. — «Презентация к мастер-классу по теме "Обучение по технологии "Перевернутый класс""». Смешанное